ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

24.04.2024 17:54

2024 թվականի ապրիլի 24-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ է այցելել Փարիզի և Օ դը Սենի փաստաբանների միությունների պատվիրակությունը՝ Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեռ Հոֆֆմանի, Օ դը Սենի փաստաբանների միության նախագահ Իզաբել Կլամե Դի Լամանի և փաստաբաններ Վենսան Նիոդեի, Ֆաբիեն Առաքելյանի, Քրիսթիան Ֆեղալ-Շուլի և Միշել Գիշաղի կազմով:

Հյուրերին ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը: Նա բարձր է գնահատել Ֆրանսիայի փաստաբանների նվիրվածությունը ՀՀ փաստաբանների պալատին և իր խորին երախտագիտությունն է հայտնել գործընկերներին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը դարձյալ Հայաստանում գտնվելու համար:

Հյուրերին ողջունել է նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը: Նա ֆրանսիացի գործընկերներին շնորհակալություն է հայտնել տարիներ շարունակ ջերմ գործընկերային հարաբերությունները պահպանելու և զարգացնելու համար, ապա գործընկերների հետ շրջել է Փաստաբանական ակադեմիայում, ներկայացրել ուսումնական գործընթացները:

Այնուհետև ՀՀ ՓՊ Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը միջազգային գործընկերներին ծանոթացրել է գրասենյակի աշխատանքային պայմաններին և գործառույթներին:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները և Ֆրանսիայից ժամանած փաստաբանների պատվիրակությունը երկուստեք հիշատակելով օրվա խորհուրդը՝ կարևոր են համարել նաև այցելել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հայ գործընկերների ուղեկցությամբ Ֆրանսիայի փաստաբաններն այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների

հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ, այնուհետև այցելել նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })